

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՔ

Կոնդակ յանուն Սինօղի ս. Էջմիածնի, որով առաջարկեցաւ տալ երկերիւր (200) ըուրի Տ. Կիւրեղ վարդապետի, յաղազս գնաւոյն նորա յամարանոց ի գիւտ առողջութեան անձին. թ. 611:

— Յանուն Կոնսիստորիային Շամախւոյ, որով կարգի Մեսրոր քահանայն Խորիոսունի ի քահանայ Շամախի քաղաքի. թ. 644:

— Յանուն Գեր. Անանիա Կողիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռնազրել ի քահանայ զնիկողայս Հալածնան վասն Արմաւիր տանի, և ի սարկաւագ՝ զարիացու Կարապետ Կայսերան և զՂահան Լազարեան. թ. 649:

— Յանուն չորից նորապսակ Կողիսկոպոսաց՝ Յովիսիայ Այվազեան Մովսիսի Կեօմբիքչեան, Յովհաննիսի Վրշարունոց և Տրգատայ Փալեան, ի վեյական Կողիսկոպոսւթեան նոցա. թ. թ. 654, 655, 656, 557:

— Յանուն Ամեն, պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մազաքիա արքեպոսկոպոսի, որով յայտ արարաւ նմա ձեռնազրութեան չորից Կողիսկոպոսացն. թ. 658:

— Յանուն Սինօղի ս. Էջմիածնի, յաղազս յղելոյ տա Տ. Կոմիտաս վարդապետն ի Բերլին երկերիւր բուրլի (200). թ. 685:

— Յանուն Սինօղի որով պատուիրեցաւ տալ Տ. Խատիսկ վարդապետի Տ. Միքայէլէկան ոռօնիկ միաբանական ի 1-էն յունուարի այսր ամի. թ. 686:

— Յանուն Կոնսիստորիային Վրաստանի և Խմերիթի որով պատուիրեցաւ թողուլ ի վահահայրական պաշտաման Զարեքայ Անապատին զԱստուածատուր վարդապետն Տ. Յարութիւնեան. թ. 696:

— Յանուն Սինօղի որով պատուիրեցաւ տալ մի հարիւր յիսուն (150) բուրլի միաբանի Մայք Աթոսոյ՝ Դալստի Տ. Միքայէլան. թ. 722:

— Յանուն Սինօղի առոքմամբ պատճենից արձանազրութեանց կալուածոց Մարշայ. թ. 757:

— Յանուն Գեր. Գրիգոր Կողիսկոպոսի Գառնակերեանց որով պատուիրեցաւ ձեռնա-

զրել զորս ընծայեալս ի քահանայութիւն վիճակին Երևանայ. թ. 758:

— Յանուն Հոգարաքութեան թեմակ, Հոգ, գպրանոցին Ն. Նոխիչն անի, որով յայտ արարաւ թէ օտարահպատակ անձինք ըլ կարեն պաշտօնավարել յազգային հաստատութիւնս մեր. թ. 793:

— Յանուն Սինօղի որով պատուիրեցաւ հրաման տալ Կոնսիստորիայից արձակել յայսմշեալ, զՀրամանս թոյլարութեան պատկաց Հինգերովդ աստիճանի խնամութեանց, առանց տալոյ զայնս ի Սինօգն. թ. 797:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵԼՔ.

Ծնորչեցան Գերգի քահանայի Փարաքար գեղջ իրաւունք կրելոյ զթաւշեայ զկամբէն վամբլա կա անուանեալ. թ. 622:

Ծնորչեցան պանակելք Նոցին Գերազատուութեանց, չորից նորապսակ Կողիսկոպոսաց՝ Տ. Յովիսիայ, Տ. Մովսիսի, Տ. Յովհաննու և Տ. Տրգատայ կրել ի կուրծս. թ. թ. 659, 660, 661, 662:

Արժանացողք Հայրապետական օրննութեան և զոհուակութեան:

Կոնդակ օրհնութեան յանուն Տիկին Ենովքեանի Կեսարացուոյ յաղազս նուիրարերութեան նորա մի տաճկական ոսկեոյ. թ. 663:

— Օրհնութեան և զոհուակութեան յանուն պ. Աեղբակայ Տեղեւան, զանձապահէ գտնանակազրամեց ա. Էջմիածնի վիճակին Փիւմիկի. թ. 664:

— առօք:

ՔԱՂՅՈՒԱՆՔ Սինօգի ՕՐ ԵԳԻՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

— — —

1899 թ. մայիս 20.— Քիւրգ Օսման Մուսա օղլու Հայոց եկեղեցոյ զանութեամբ քրիստոնեալին ընդունելու ինդիրը յարգուած լինելով Տ. Կառավարչապետի կողմից 3 մայիսի թ. 4666 զրութեամբ՝ Սինօղը հըրամացեց Երևանայ Կոնսիստորիային, մկրտել և ընդունել նորան Հայաստանեայց ա. Եկեղեցւոց ծոցը:


— Նորին Վեհափառութեան կարգազը-  
րութեամբ Սինօղի անդամ Արք. Յուսիկ  
վարդապետ Տէր Մավսիսեանցին իրաւունք  
տրուեցաւ բժշկուելու զնալ երկու ամիս ժա-  
մանակով:

Մայիս 21.—Սինօղը՝ Տիմիսի գառաս-  
տանական պալատի վճռի համաձայն, հրամա-  
ցեց Սևանայ քանահայր Արք. Մարգիս վար-  
դապետ Փիլոյեանցին՝ կարգադրյա անել Դալբ-  
դարդաշ զիւղի Ղազար քահանայ Տ. Խաչա-  
տրիանցին (Նոր Բայազիղի զաւառ) նորս ա-  
պօրինի զօրծերի համար:

— Վեհափառ Հայրապետի կարգազը-  
րութեամբ Մայիս Ամսուի միարան Արք. Եիւրեղ  
վարդապետը թոյլութիւն ստացաւ չորս ա-  
միս ժամանակով ամարտանցներ զնալ բժշ-  
կուելու:

Մայիս 31.—Քիւրդ Մահել Դիլօ-օղլու-  
խնդիրը Տ. Կառավարչապետի թ. 5285 գրու-  
թեան համաձայն ընդունուած լինելով՝ Ս.  
Սինօղը հրամացեց Մարգարապատի զործա-  
կալին մլրաել նրան Հայրաստանեայց Ս. Եկեղե-  
ցոյ ծեսով ու շուտափցաւ տեղեկութիւն հա-  
րորդել այդ մասին:

— Վեհափառ Հայրապետի թ. 529 սրբ.  
Կննդակի համաձայն Ս. Սինօղը ըրջարերական  
ու զարկեց Հայոց բոլոր կոնսիստորիաներին և  
առաջնորդներին, որպէս զի այսուհետեւ բոլոր  
ուխտասեղիների և վանքերի արդիւնքները և  
ստացուած նուերները ու զարկուին անմիջա-  
պէս Սինօղ:



## ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

### ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՏ ԿԵՏԵՐ

Ս. ԳՐԱԾԻ ՄԵՋ:

Արք. Եղիշէ քահանայ Դավամանջեան մի  
շարք հարցումներ ու զարկելով մեղ խնդրում  
է նոցա բացարութիւնը առ Արարատի մի-

ջոցաւ: Մենք կաշխատենք որչափ կարող ենք  
զոհացում տալ հետպհեաւ. Տէր Հօր հոգեւոր  
հետաքրքրութիւնները հետաքրքրական  
և օգտակար կլինին նաև ուրիշների համար:  
Ունք է ենթազրել որ այզպիսի հարցեր շա-  
տերին զրադեցնում են. Հրամիրում ենք  
ամենքին Տ. Եղիշէի օրինակին հետեւելու, մենք  
ի սրտէ ուրախ կլինինք և յօդարութեամբ  
պատասխան կտանք ամէն մի շահեիան հարց-  
մանը կարող անձանց օգնութեան և զիմելով:

Ա) Մանուկ Ցիսուսին հրեշտակի հրամանու-  
թվապառ վախցըրին ձնողքը (Մատթ. Բ. 13—14).  
Բնչպէս ուրիմն կարելի էր ութերորդ օրը թլիա-  
տել նորան Երուսաղեմում և քառասներորդ օրը  
տաճար ընծայել (Պուկ. Բ. 21—28). միթէ յըն-  
թացս քառասուն օրուայ մեռաւ Ներովգէս:

— Աւետարանական պատմութիւնը իրա-  
ւունք չի տալիս ամենեին ընդունելու, թէ  
վախուասն յեզիպառ ընծայումք կամ թլը-  
վատութիւնից առաջ է եղել: Եթէ Հերով-  
դէս «ասազի երեւլու ժամանակը ստուգելով  
մողերից՝ երկու տարինակնից ցած երեխանե-  
րին կոտորել տուաւ կնշանակէ՝ արգէն մօտ  
երկու տարի կարտ ինչ նոքա հրաշտի տասզը  
տեսել էին և եղբակացըրել որ միաժամանակ  
ծնուել է նաև «Հրէից թագաւորը»: Ուրիմն  
Փրկչին Եզիպառ վախցնելիս թլիատութիւն  
և ընծայում վազուց տեղի ունեցած պէտք  
է լինելին և նա կարող էր արգէն մօտ երկու  
տարեկան մանուկ լինել: Եկեղեցական տաւան-  
դութիւն է դարձել հարկաւ և ծննդեան տօ-  
նին կարգացուած աւետարաններից Քրիստոսի  
ծնունդը պատակերացնող նկարների միջոցաւ  
ամրացել է մեր մէջ այն կարծիքը, թէ մա-  
գերը նոյն իսկ ծննդեան երեկոյեան են եր-  
կոպացութեան եկել, ինչպէս հովհանքները բայց  
այդ յառաջացել է միայն երկու զեպքերի մէջ  
եղած խորհրդաւոր կազից: Կրօնական խոր-  
հրդագածութիւնը, ինչպէս առհասարակ ամէն  
մի հօգեւոր թռիչչք՝ չի կարող մանրակրկիս  
պատմական հետախուզութեանց ետեկից ընկ-  
նել և նոցա ցոյց տուած սահմաններում  
վակուած մնալ. նորան ներքին խորհուրդն  
է զրադեցնում և ոչ արտաքին երեսոյթը—